ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, համաձայն՝ ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, ՀՀ օրենքի, ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքի , «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարան համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թ տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի, այդ թվում

ա). Ապարան համայնքի մանկապարտեզները հաճախող երեխաների վարձավճարի 2026 թ դրույքաչափը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 1.1 հավելվածի

բ) Ապարան համայնքի Ապարան քաղաքի արվեստի դպրոցում սովորող երեխաների վարձավճարների 2026 թ դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 1.2 հավելվածի

գ) Ապարան համայնքի մարզադպրոցներում գործող խմբերի և նրանց ծառայություններից օգտվողների վարձավճարների 2026 թ դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն N 1.3 հավելվածի

դ) Ապարան համայնքի կոմունալ ծառայության կողմից իրականացվող աղբահանության ծառայություններից օգտվողների վճարների 2026 թ դրույքաչափերը՝ համաձայն N 1.4 հավելվածի

ե) Ապարան համայնքի կոմունալ ծառայության կողմից իրականացվող՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունից օգտվողների վճարների 2026 թ դրույքաչափերը՝ համաձայն N 1.5 հավելվածի

2. Համայնքի ղեկավար պարոն Կ.

Եղիազարյանին՝ ապահովել տեղական տուրքերի և վճարների 2026թ տեսակների ու դրույքաչափերի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, մոբիլիզացնել աշխատակազմի ուժերը՝ ապահովելու տեղական տուրքերի և վճարների ժամանակին գանձումները, և համայնքի վարչական սահմաններում սուբյեկտների կողմից ծավալած գործունեությունների համար սահմանված թույլտվությունների ժամանակին տրամադրումը:

3.Համայնքի վարչական տարածքը դասակարգել 2 գոտիների՝

1-ին գոտի՝ Ապարան քաղաք և միջպետական նշանակության ավտոմայրուղու կողեզրերին գտնվող սուբյեկտներ

2-րդ գոտի՝ Համայնքի Քուչակ, Շենավան, Հարթավան, Ափնագյուղ, Արագած, Եղիպատրուշ, Երնջատափ, Շողակն, Արայի, Վարդենուտ, Ծաղկաշեն, Ջրամբար, Լուսագյուղ, Կայք, Չքնաղ,

Սարալանջ, Վարդենիս, Չքնաղ, Թթուջուր, Ձորագլուխ, Նիգավան, Մելիքգյուղ բնակավայրերը:

4. Սույն որոշումը տարածվում է 01.01.2026 թ-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա: